

Աշխատանքային պայմանագիր

Քաղ. _____

<< >> _____ թ.

_____, ի դեմս տնօրեն _____ ի

(կազմակերպության անվանումը)

Այսուհետ «Գործատու» մի կողմից և քաղաքացի _____, անձնագիր սերիա N _____, տրված _____, կողմից (Այսուհետ «Աշխատող»), (հետագայում կանվանվեն նաև «Կողմեր»), մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գործատուն սույնով համաձայնվում է աշխատանքի ընդունել Աշխատողին, իսկ Աշխատողը պարտավորվում է ստանձնել աշխատանքը և կատարել իր պարտականություններն ազնվորեն, բարեխղճորեն և արհեստավարժ կերպով՝ համաձայն սույն Պայմանագրի պայմանների, Գործատուի ներքին և Հայաստանի Հանրապետության օրենսդրության դրույթների:

1.2. Աշխատողը ընդունվում է աշխատանքի _____ ստորաբաժանումում, որպես _____, որի անմիջական աշխատանքային պարտականություններն են՝

• _____

1.3. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը համարվում է աշխատողի հիմնական աշխատանքը:

2. Պայմանագրի գործողության ժամկետը, փորձաշրջանը, վայրը, աշխատաժամանակը և արձակուրդը

- 2.1. Աշխատողը ընդունվում է աշխատանքի 201__թ__-ից մինչ 201__թ. ____-ը:
- 2.2. Սույն Պայմանագրով Աշխատողի առաջին աշխատանքային օրն է «____» _____ 201__թ.:
- 2.3. Աշխատողի համար՝ սույն Պայմանագրի համաձայն աշխատանքային վայր է _____ հասցեում գտնվող գրասենյակը:
- 2.4. Աշխատողի համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ, աշխատանքային օր՝ _____, ժամը 9:00-ից մինչև 18:00-ն, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատանքի կատարումը պայմանավորված է հանձնարարության անհետաձգելիությամբ և կարող է բացասական անդրադառնալ կատարվող աշխատանքի վերջնական դրական և որակյալ արդյունքի վրա: Նման դեպքերում աշխատանքը կարող է իրականացվել նաև սույն կետով սահմանված աշխատանքային օրերից և/կամ ժամերից դուրս:
- 2.5. Աշխատողի համար սահմանվում է ընդմիջում աշխատանքային օրվա ընթացքում ընդհանուր առմամբ 1(մեկ) ժամ տևողությամբ՝ ժամը 13:00 – 14:00:
- 2.6. Աշխատողի հանգստյան օրերն են շաբաթը և կիրակին:
- 2.7. Աշխատողի շաբաթական աշխատաժամանակի տևողությունը սահմանվում է 40 (քառասուն) ժամ, եթե ավելի կարճ տևողություն չի սահմանված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
- 2.8. Աշխատողն ունի ամենամյա քսան աշխատանքային օր տևողությամբ վճարովի նվազագույն արձակուրդի իրավունք: Աշխատողին ամենամյա արձակուրդը տրամադրվում է Գործատուի կողմից հաստատած ամենամյա արձակուրդների գրաֆիկով: Աշխատողի ցանկությամբ ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով անխափան աշխատանքի ընթացքն ապահովելու նպատակով, Գործատուն Աշխատողի՝ ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը տրամադրում է այն ժամանակ, երբ դա չի խոչընդոտում Գործատուի բնականոն գործունեությանը:
- 2.9. Սույն պայմանագրով Աշխատողի համար սահմանվում է _____ փորձաշրջան: Մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը Գործատուն կարող է Աշխատողին ազատել աշխատանքից՝ այդ մասին երեք օր առաջ գրավոր ծանուցելով վերջինիս:

- 2.10. Փորձաշրջանի ընթացքում Աշխատողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները, որոնք սահմանված են Գործատուի և Աշխատողի միջև սույն աշխատանքային իրավահարաբերությունների շրջանակներում:
- 2.11. Եթե փորձաշրջանն անցնելուց հետո Աշխատողը շարունակում է աշխատել, ապա նա համարվում է փորձաշրջանն անցած, և Գործատուն կարող է սույն պայմանագիրը լուծել միայն աշխատանքային օրենսգրքով սահմանված հիմքերով:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1 Գործատուն պարտավոր է՝

- 3.1.1. Աշխատողին ապահովել Պայմանագրով, աշխատանքային օրենսդրությամբ աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվային իրավական ակտերով նախատեսված աշխատանքի նորմալ պայմաններով:
- 3.1.2. Աշխատողին ժամանակին տալ աշխատանքային հանձնարարություններ:
- 3.1.3. Աշխատողին տրամադրել նրա աշխատանքային գործունեության հետ կապված տեղեկատվություն, փաստաթղթեր-կյութեր:
- 3.1.4. Աշխատողին ստորագրությամբ ծանոթացնել կազմակերպության ներքին կանոնակարգին և դրա փոփոխություններին:
- 3.1.5. Աշխատողին վճարել աշխատավարձ՝ սույն պայմանագրի 4.1 կետի համապատասխան:

3.2 Գործատուն իրավունք ունի՝

3.2.1. Աշխատողից պահանջել գործող օրենսդրության, ներքին կարգապահական կանոնների, ներքին իրավական այլ ակտերի պահանջների, ինչպես նաև սույն Պայմանագրով սահմանված աշխատանքային պարտականությունների պատշաճ որակով-ժամանակին կատարում, դրանց չկատարման համար կիրառել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգապահական տույժեր:

3.3. Աշխատողը պարտավոր է՝

- 3.3.1. Հանձնարարված աշխատանքները կատարել անձամբ, ժամանակին և որակով:
- 3.3.2. Ծանոթանալ կազմակերպության աշխատանքային ներքին կանոնակարգին, աշխատել համաձայն կանոնակարգի և հետևել նրա փոփոխություններին:
- 3.3.3. Իր աշխատանքային տեղը և դրան հարող տարածքը պահպանել սանիտարահիգիենիկ պատշաճ վիճակում:
- 3.3.4. Պահպանել և ապահովել իրեն հայտնի դարձած ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունները-ոչ մի դեպքում չփոխանցել որևէ տեղեկություն կամ փաստաթուղթ կազմակերպության և պատվիրատուների գույքի և արտադրական գաղտնիքների մասին որևէ երրորդ անձի: Աշխատողի կողմից այս պարտականության որևէ խախտում կենթարկվի ՀՀ գործող օրենսդրության համաձայն պատասխանատվության (այդ թվում՝ ֆինանսական) ընդհուպ մինչև աշխատանքային պայմանագրի լուծելը:
- 3.3.5. Գործածել Գործատուի գույքը պատշաճորեն կինամքով, ձեռնարկել բոլոր ողջամիտ քայլերը Գործատուի գույքը և գույքային շահերը գողացվելուց, վնասվելուց և փչացվելուց պաշտպանելու համար:
- 3.3.6. Փոխհատուցել Գործատուին կամ այլ Աշխատակիցներին իր ոչ իրավաչափ գործողությունների (անգործության) հետևանքով առաջացած վնասների համար:
- 3.3.7. Ծառայողական պարտականությունները կատարելու նպատակով Աշխատողը կարող է ուղարկվել գործուղման՝ համաձայն գործող օրենսդրության:
- 3.3.8. Որևէ պատճառով աշխատանքից բացակայելու դեպքում Աշխատողը պարտավոր է այդ մասին տեղյակ պահել Գործատուին (տնօրենին) կամ իր անմիջական ղեկավարին:

3.4. Աշխատողն իրավունք ունի՝

- 3.4.1 Գործատուից պահանջել ժամանակին կատարելու վերջինիս վրա սույն Պայմանագրով դրված՝ աշխատավարձը վճարելու պարտականությունները,
- 3.4.2 Սույն Պայմանագրով, Ընկերության ներքին իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4. Աշխատավարձ

4.1 Գործատուն պարտավոր է Աշխատողին ամսական վճարել աշխատավարձ _____
(_____) ՀՀ դրամ, որն իր մեջ ներառում է ԸՇ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը և վճարները, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի սահմանված ժամկետներում:

4.2 Գործատուն հաշվի առնելով Աշխատողի կատարած աշխատանքի որակը, վերջինիս աշխատանքային կարգապահությունը, կարող է վերջինիս վճարել պարգևավճարներ և կիրառել խրախուսման այլ միջոցներ:

5. Այլ պայմաններ

- 5.1 Աշխատողը հաստատում է, որ իրեն բացատրվել են իր աշխատանքային պարտականությունները և որ նա հասկանում է դրանք:
- 5.2 Աշխատողը հաստատում է, որ ինքը ծանոթացել է իր աշխատանքին վերաբերող Գործատուի ներքին իրավական ակտերին և կազմակերպչական կառուցվածքին (սույն Պայմանագրի ստորագրմամբ):
- 5.3 Գործատուն պատասխանատվություն չի կրում վնասների համար, որոնք կարող է կրել Աշխատողը իր պարտականությունները կատարելիս:
- 5.4 Պայմանագրի ցանկացած պայման կարող է փոփոխվել, լրացվել կամ դադարեցվել ցանկացած ժամանակ Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ, ինչն էլ հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:
- 5.5 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել այդ մասին 30 օր առաջ մյուս կողմին գրավոր տեղյակ պահելու դեպքում:
- 5.6 Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու պատճառով Գործատուն կարող է լուծել սույն պայմանագիրը այդ մասին 10 օր առաջ գրավոր տեղյակ պահելով Աշխատողին:
- 5.7 Կողմերի միջև սույն Պայմանագրից բխող վեճերը լուծվում են Գործատուի և Աշխատողի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Փոխադարձ համաձայնության չգալու դեպքում՝ վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանների կողմից:
- 5.8 Պայմանագիրը կարող է դադարեցվել կամ լուծվել Գործատուի կողմից միակողմանի եթե՝
- Աշխատողը առանց հարգելի պատճառների իր վրա դրված պարտականությունները պարբերաբար չի կատարում,
 - Պարբերաբար աշխատանքից ուշանալու (եթե մեկ ամսվա ընթացքում ուշացումների ընդհանուր տևողությունը կազմել է ութ ժամ և ավելի), կամ ամսվա ընթացքում անհարգելի երեք աշխատանքային օր բացակայության դեպքում:
 - Օրենքում սահմանված այլ դեպքերում:

6 Եզրափակիչ դրույթներ

- 6.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:
- 6.2 Սույն Պայմանագիրը կազմված է 2 (երկու) հավասարազոր օրինակից՝ հայերեն, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:
- 6.3 Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմերի հասցեները և ստորագրությունները

Աշխատող

Ա.Ա.Հ _____

Հասցե _____
Անձ. _____ N _____
Տրված _____ թ.
Սոց. Քարտ _____
հեռ _____

(ստորագրություն)

Գործատու

Անվանումը _____
ՀՎՀՀ _____
Հասցե _____
նօրեն _____

(ստորագրություն)

